Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 842 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 4000 շահառուի հումանիտար աջակցության ցուցաբերում՝ առաջնային կարիքները հոգալու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Ամերիկայի Միացյալ Նահանգներ-Հայաստան հիմնադրամ (Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ձեքսըն նահանգ, 205 փողոց, Գլենդել 91206-4375)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայկական Կարմիր խաչի ընկերություն» հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ՝ 00006023)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	129,828,800 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	2023 թվականի սեպտեմբերի 24-ից Լեռնային Ղարաբաղից տեղահանված 4000 շահառու: Ծրագրի թիրախ խումբը վերջնական ձևավորվելու է պատկան լիազոր մարմինների և տեղական իշխանությունների աշխատակազմերի հետ համագործակցության արդյունքում:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) հիգիենիկ և կենցաղային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 31,113,500 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում:

		2) անկողնային պարագաների հավաքածուների ձեռքբերում և տրամադրում՝ 87,456,500 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում. 3) արկղերի ձեռքբերում՝ 330,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում. 4) ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 700,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում. 5) բաշխումն իրականացնելու համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում՝ 2,400,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում. 6) աշխատավարձ ծրագրի անձնակազմի համար՝ 480,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում. 7) պահպանման ծախսեր՝ 7,348,800 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) հիգիենիկ և կենցաղային պարագաների ձեռքբերում և տրամադրում՝ 31,113,500 դրամ արժողությամբ. 2) անկողնային պարագաների հավաքածուների ձեռքբերում և տրամադրում՝ 87,456,500 դրամ արժողությամբ. 3) արկղերի ձեռքբերում՝ 330,000 դրամ արժողությամբ. 4) ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրության ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամ արժողությամբ.

		5) բաշխումն իրականացնելու համար տրանսպորտային ծառայությունների ձեռքբերում՝ 2,400,000 դրամ արժողությամբ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 8,528,800 դրամ արժողությամբ, որը ներառում է աշխատավարձ ծրագրի անձնակազմի համար՝ 480,000 դրամ, պահպանման ծախսեր՝ 7,348,800 դրամ, ընկերության տեսանելիությունը ապահովելու համար լոգոների տպագրություն՝ 700,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի, Սյունիքի, Վայոց ձորի, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների հետ սերտ համագործակցությամբ, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և վարչական շրջանի ղեկավարների աշխատակազմերի հետ սերտ համագործակցությամբ: Հայկական Կարմիր խաչի ընկերությունը համագործակցում է նաև Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեն իրականացնելու է գործունեության անմիջական վերահսկումը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

27.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ